<u>Գ Ր Ա Հ Ա Ն</u>

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺԶ. ԺԷ. ԺԸ և ԺԹ դ-ր. Կ. Պ-լս)

(Շար. տես Բազմ. 1928, էջ 339)

## Դ.

## (ԺԹ դար 1800–1865)

*Նախորդ յօդուածով մեր ընթերցողներուն ներկայացուցինք աշխարհաբար գրուած տապանագիրներու շարք մը՝ ծանօթութիւններով միասին։ Այս անգամ պիտի ներկայացնենք գրաբար տապանագիրներէ ընդօրինակութիւններ որոնք կը վերաբերին ԺԹ դարուն առաջին կէսին և քիչ մ՚աւելի անդին* (1800-1865), *նկատելով որ* 1865-*էն յետոյ Բանկալթիի հայ գերեզմանատան մէջ ննջեցեալներու թաղումը արգիլուեցաւ Թուրք կառավարութեան կողմէ՝ քոլէռայի մեծ համաճարակին պատճառով։*

1. Ցայսմիկ տապանի ամփոփեալ դնի,
Սահակայ պետի մարմին պիտանի։
Ց՚Ալաշկերտ երկրէ Մանկասար գեղջէ,
Որդի Աղնուփ ի Դաւթեան տոհմէ.
Սնեալ սուրբ վարուք ի սբ. Կարապետ
Եղև ծայրագոյն այս մեծ վարդապետ։
Ցետ սակաւ ամաց ի Պօլիս եկեալ,
Զաքարիայ պետի փոխանորդ կացեալ,
Ցոյժ բրօրութք. ալեօք ծաղկեցաւ.
Ցութսուն ամ հասեալ վխճն. ընկալաւ։
Ո՜վ հայք և եղբարք հանդիպողք շիրմիս,
Աղերսեալ խնդրէ ի ձէնջ ողորմիս։
Ցամի փրկչին 1800.
յաւուր Տնընդառաջին։

2. Սողոմէ տիկին դուստր Հիւրմիւզի,
Համեստակրօն ըզգաստ և բարի.
Կողակից ազնիւ Ըստեփաննոսի.
Սառաֆեան զարմէ ականակերտի։
Այրի մընացեալ յարտասուաց վայրի,
Նըստեալ մընացեալ հանգոյն տատրակի.
Կեցեալ մաքրութեամբ յընտիր վիճակի.
Փայլեալ առօթիւք նըման շուշանի։
Ի մէջ նեղութեանց փորձ իբրև ոսկի,
Ցօժար տանելով զանազան վըշտի,
Եօթանասնեկի ամաց հասակի,
Ցաստի կենցաղոյս յանանցըն փոխի։
Ցամի տեառն 1800 Մայիս 9։

3. Շիրիմ վիմածածք, յիւրում տապանի,
ունի ի պահեստ, այր մի պիտանի,
Որ է յԵւդոկեայ քաղաքին ծնեալ,
յետոյ ի Բիւզանդ, կրթութեամբ սընեալ.
Ցարութիւն պետին, աշակերտ մտեալ.
համեստ և զգօն, հր... կերտ գտեալ։
Սարգիս փոխանորդ, սարկաւագ արքի
խոհեմ Գրիգորի, հեզ պատրիարքի։
Ապա, փոխանորդ Սաղիմայ կարգեալ,
ի Ստամպօլ եկաց, մինչ ի մահ յարգեալ։
Փոքր ինչ ժամանակ, յախտս սովոյ նեղեալ,
դարմանք բժշկաց, շահ օգտի չեղեալ։
Զուեալ ի կենաց, յութսուն հասակի,
յուսով փափա(ք)եալ, վերնում պըսակի։
Թիւ հայոց հազար, եւ երկու հարիւր
քառասուններինն, ըստ նոյն համարիւր.
Օր թաղման երրորդ, փետրվար ամսեան
ողորմիս հանէք, սիրով տէրունեան։

4. Ցիննուտասին կենարար դարիս ի գլուխ,
Գարնանաբեր ամսոյն ի մուտ ծաղկանցն ընդ բուխ։
Ետես բուսեալ ուր սիւք սընոյց Եւդոկիա
Զարմ ըզՊետրոս Փիլիպպոսեանն ըՍտեփանեայ։
Հռչակելի փոքուն Հայոց մինչ ի Պոլիս
Վաճառական՝ժիր և արդար արթուն յաստիս։
Քան ի զանձել ի մարդասէր բարեաց օճան,
Որով զընկաց երկնից Թանգար զաստեղց կայան։
Տիոցն ընդ ութ ամսոյ յամ մի և քառասուն
Մայրաքաղաքս յայս աւանդեալ զիւր մահացուն։
Զհոգին անմահ անդ ի վերին քաղաքամայր
Երկաքին ոհ ազգատոհմին անձուկ յամայր։

5. Ամփոփեալ կայ յայս տապանի,
Պալասանն մահտեսիյի.
Դուստր մահտեսի Թովմայի,
Որ զաւառաւ Արեւելցի։
Մահուն պատառ սա եղանի,
Ի գեղեցիկ Թարմ հասակի։
Թողեալ զծնօղս յոյժ ցաւալի,
Անմխիթար և տրտմալի.
Փոխեալ յաստեաց կայանն երկնի.
Ի հարսնարան փառաց փրկչի,
Հազար ութն հարիւրորդի
Ցամի տեառն մեր փրկողի.

digitised by A.R.A.R.@

Յօգոստոսի տասն և հնգի։
Որք հանդիպիք սուք զողորմի
Որում և դուք լերուք արժանի։

6. Կենդանի հոգւով ննջէ յայս տապան,
Բարուն շնորհազարդ և առաքելական.
Աղէքսանդր անուն ճետին Ալլանեան,
Ծնունդ Օհաննու քաջին Վասպուրեան։
.Ուշիմ էր մտօք, բարուք խոհական,
Զարգացեալ ի Հռոմ գիտութեանց ավկեան։
Ուստի ամբարեաց զիմաստ զանազան,
Ի մէջ դպրատան Բրօբականտեան։
.Հասակաւ դիմօք արի և ախոյեան,
Լեզուօք բազմազան բանիւք քաջաբան.
Ննջեաւ առաքեալ չինին Գաղատեան,
Յորում քարոզեաց Պօղոս աննման։
Ի չափ հասակին քառասնեւեօթեան,
Անկաւ ի մահիճ յախտէ քաղցկեղեան.
Կարդալով զանուն Սուրբ Երրորդութեան,
Հաւատով յուսով ընկալաւ զվախճան։
Յամի փրկչին 1801 սեպտեմբերի։

7. Յայսըմ տապանի
Հանգըստականի
Ննջեալ պահպանի,
Համասփիւռ բարի։
Զի կամք Արարչին,
Պատանալ վերըստին,
Ի սեպհականին։
Թորգոմ Մանուկի,
Միակին որդի,
Ազնիւ Յարութիւնի,
Կողակից յարգի։
Արդ սուք ողորմիս,
Դիպօղք տապանիս,
Յաղօթս տէրունիս,
Եւ Տէր ողորմիս։
Որ հանգեաւ ի թվին
Հայոց ՌՄԾ և մարտի
Թ

8. Թէոփիլէ Մաղաքեան
Ծաղկեալ անդաստան ծաղկամբ և պտղով,
Տոհմ իմ նազելի էր թոռամբ որդւով։
Ինև հրճուէին ընտանիքս չգով,
Եւ պարք աղքատաց տրովքս հոլով։
Ընդ վաթսուն և ութ ամաց վճարիլ,
Յուք դիմագրաւեալ եսուն դադարիլ.
Զանպէտըս ձգել յանանցըս փոխիլ.
Անդարձ վըճռաւ յայս տապան կնքիլ։
Թիւն 1802 ի փետրվարի 10։

9. Բէրսաբէ տիկին դուստր Զաքարի,
Յոյժ տառապանօք ի կենաց զրկի։
Մերձ առ Մաղլմի իւրում զուգակցի,
Ամփոփեալ դնի ի սոյն տապանի։
1802 յունիսի 14։

10. Տխրահրաւէր ձայն ահեղ կոչողին,
Զիա՞րդ կանխահաս եհաս վեհ անցին.
Այր ականաւոր պարծանք էր զարմին.
Մկրտիչ Աղա իշխան կարնեցին։
Որդի պանծալի Ղուկաս աղային,
Մհի. Գասպարեան նա բոլոր ազգին,
Բարեսէր պատճառ բարեաց բնաւին.
Կանգնիչ դպրատան մանկանց ի Կարին.
Սա տեղափոխեալ ի գահ Կոստանդին։
Անդէն մահացաւ յախտէ իւր նախկին,
Որդւոց ընտանեաց սուգ անհնարին.
Բոլոր աշխարհի և եղբարց կրկին
Քառասնեօթնից ամօք ասս հանգեաւ մարմին
Հոգին յիւր արդիւնս հրճուի առ փրկչին։
Ո՞հ աղիողորմ վայր խաւարային
Ի՞բր ամփոփեցեր հանուրց ցանկալին։
Յամի Տն. 18...

Սոյն չիրիմ կամրկապցի ազնուա — տոհմ Ներսիսեան հատավաճառ Մարտիրոս գերյարգոյն որ հանգեաւ ի Տր.։

11. Ո՛ հողմ դառնութեան զիա՞րդ շնչեցեր,
առ իս զերթ առիւծ զի՞ մռնչեցեր.
Լապտեր իմ կենաց յանկարծ շիջուցեր.
հարեր անխընայ յայս խոր իջուցեր։
Արդ դու կաց սակաւ, ահա՛ փող հնչէ.
յառնէ ամենայն որ ի Տէր ննջէ։
Զի այն որ արար զհամայն յոչնչէ,
տալով մեզ կեանս խայթոց քոյ ջնջէ։
Ո՛ հարք և եղբարք մաղթեցէք առ Տէր
ողորմիլ յար մեզ, զի յայն է յոյս մեր։
Թուին ՌՄԾԳ

Տապանագիր տոհ ազնուի. Քէօմիւրճեանց Թագւոր աղայի և որդւոյ նորա Գրիգորի։

12. Երանական
նոյն Յիսուսի,
հրաւիրեաց
ըզսիրելիս։
Եթէ եկայք,
ի հարսանիս.
ի ժառանգել
զանանց բարիս։
Դիմեալ սիրով
ի տէրունի.
երկնաքաղաքն
զարմանալի։
Մատաղատունկ
Նոր հասակի,
արժան եղեալ
սբ. Պսակի։
Յամի Տն. 18..
դեկտեմբեր 14
Սաստիկ վճիռն
արարչական
հատաւ վս. իմ
անշրջական.
Զգել զաստիս
աշխարհական
դառնալ հոգւով
համայնզամայն.
Երկնից պաշար
իմ հոգեկան,
բարի գործոց
ըմբռնական։
Ոչ ես դադար
երկարական
մահուն օրհաս
յանկարծական։
ի թուին 179.
հոկտեմբեր 23

digitised by A.R.A.R.@

Տապան Պապենց Պետրոսի Բէզրոյ։

13\. Վէմ անունս հզօր անխորտակելի,
յանկարծ փշրեցայ դարձայ ի փոշի։
Աւա՜ղ անցաւորս անկայուն բաղդի,
որ ի դողն ախտէ փութապէս յաղթի։
Էի ես գլուխ Սեբաստեան գընդի
որ ի Թէրսխանայ[1] ի գործ արքունի։
Պէյից, փաշայից յաւէտ սիրելի.
արդեամբ մեծանուն ի մեծ քաղաքի։
Բազմաց բարերար իմոց և օտարի
հայրենեաց պարծանք՝ անձանն իմ կանգնի։
Զորիւքտասնեքումբք ամք կենացս չափի,
ամփոփեալ դնի ի գերեզմանի։
Ցաւիր դու մօտք յայս տապան շիրմի
առ յինէն խորհուրդ, կենաց և օգտի։
1804 ի մայիսի 8

Տապանս է Իգնատիոս վարդապետի Հա-
նըմեանց։

14\. Կենդանի հոգւով ննջէ յայս տապան.
բարուն շնորհազարդ և առաքելական։
Իգնատիոս անուն տոհմին Հանըմեան
ուշիմ էր մտօք բարուք խոհական։
Զարգացաւ ի Հռոմ գիտութեանց ովկեան
ի մեծ դպրատան Բրօբականտեան։
Ի չափ հասակին երեսուն երեքեան
խոցեալ կարեվէր յախտէ ժանտ մահուան.
Կարդալով զանուն սբ. Երրորդութեան
հաւատով յուսով ընկալեալ զվախճան։
Փոխեցաւ առ Տր. ի հասակի լգ ամաց։
1804 սեպտեմբեր 18

Սոյն տապանագիրը պարզապէս ընդօ-
րինակութիւնն է թիւ 6 տապանաքարին։
Ասոր նման ընդօրինակութիւններու առէպ
կը պատահինք ազգային գերեզմանատու-
ներուն մէջ ի Կ. Պոլիս։

Շիրիմ մահտեսի Նուրի խաթունի։

15\. Դշխոյ տիկնաց յայս խմբական կնքեալ պահի.
Արիստակէս մեծ իշխանի զոլ կողակից։
Լցեալ զկեանս ներծերութեան սա վաղճանի,
Յուսով լինիլ անարատից ուրախակից։
Ընդ ամբծից տալ զօրհնութիւն վերնոցն
[Վեհի
Ընդ անմարմնոցն երամից աղօթակից։
Մի խնայէք սորին հոգւոյն տալ զողորմի
Գոչիք և դուք ընդ արդարոցն դասակից։
Փոխեալ ի կենցաղոյս յամի Տն. 1804
յունվարի 8ի

16\. Տապան
Սերոբէ
Աղայի
Հիւրմիւզեան

Սերովբէ սիրարփի Հիւրմիւզեան,
Աջակից քաջ փեսայ տան Տիւզեան.
Ա՛յր արանց արժանի իւր անուան,
Գերազանց պայմանի զովութեան։
Բազմարդիւն ազգասէր հոգեջան,
Մեծանուն անվեհեր ի Դըրան։
Երկիւղած խորազգաց խոհական,
Ողորմած աղքատաց օգնական։
Արթնութեամբ պատրաստեալ ցօր մահուան
փոխեցաւ ի նոր կեանս անվախճան։
յամի 1804
յապրիլի գ
ի հասակի կ ամաց

Տապան Գէորգայ Նազարէթեան։

17\. Այն որ քաղցրախորժ ի խօսս կենակցաց,
Ցօգունց սիրեցեալ ըստ մարմնոյ կարեաց։
Զիա՞րդ վաղ մեկնի յիւրոց սիրելեաց
Զախտ աղէտալին ախտացեալ չուեաց։
Այր սակաւախօս բայց խորհըրդազգած
Ճարտար ոսկերիչ ի հիւսուած ականց։
Այլ և հանճարեղ ի գիւտ այլ գործեաց
Առ ի լըրումն արուեստից արդեանց
Ճանապարհորդեալ յերկիր եւրոպեանց
Բայց զլրացեալն տեսանել չկարաց
Թողեալ զերկ որդիս աստ անկեալ մընաց։
18...
ի հասակի խզ ամաց

Այս գերդաստանը լատինացած է այժմ
և Ֆէրի — Գիւղի լատին գերեզմանատան
մէջ ընտանեկան դամբարան մ'ունի վայե-
լուչ՝ համակ մարմարէ, մէջտեղը կոթո-
ղով, որուն վրան կը կարդացուի ընտա-
նիքին հանգուցեալ անդամներուն անուն-
ները Famille Nazareth մակագրով։
Վերոյիշեալ գերեզմանատունը կը հանդի-
պինք կարգ մը ուրիշ Հայ—Լատին դամ-
բարաններու, զորօրինակ Famille San-
daldji (Սանտալճեան), Der David (Տէր
Դաւթեան), Damad (Տամատեան), Sa-

1\. Արքունի նաւարան։

mandji (*Սամանճեան*), Boydan Markiewic (*Աստուածատուր Մարկոսեան*) *Լեհացի մ.* 1796 *Ապր.* 22. Stephano Sahagiewic (*Ստեփանոս Սահակեան*) *Լեհացի մեռած* 1796 *մայիս* 6*ին և այլն։*

*Տապան Սահակ վարդապետի Սոֆեալեան Եպիսկոպոսին Սատաղիոյ։*

18. *Արթուն հոտապետ հայր գորովական,*
*Սահակ վարդապետ պրծնք. Սոֆեալեան։*
*Ջեղիա գրեալ վարժիչ Կիւլապեան.*
*Ինքնավարժ փութով յառաջեալ յուսման։*
*Գովելի վարուք առաքինութեան,*
*Այցելու ընտրի Վիքար պատուական։*
*Անարատ պաշտօն կալաւ ժրաջան.*
*Յաւէտ աղքատաց եղեւ ապաստան։*
*Արդեամբք բարելից յալիս ծերութեան*
*Յաւելաւ առ հարս ութսուն հինգամեան։*
*Յամի Տն.* 1804 *ի մայիսի* 29

19. *Հայր Յակովբոս Մխիթարեան*[1],
*Վարդապետ մեծ տանն Չամչեան։*
*Ազնիւ ողկոյզ իմաստութեան,*
*Ի ձոյլ հատից ըզգաստութեան։*
*Ոսկիափայլ փող յոբելեան*
*(Բ)անին կենաց ճշմարտութեան։*
*Համբերատար աշխատութեան.*
*Յոգնավաստակ արիութեան։*
*Սա հեղինակ օրագրութեան,*
*Ազգիս մերոյ Աքանազեան։*
*Քաջ չափաբեր երկնից չարժման.*
*Տումարագէտ բստոյիկեան։*
*Ութսուն երեք ամ լիութեան*
*Դադկեալ յիւրում կենդանութեան։*
*Փոխի յաստեաց յերկնից կայան.*
*Ցնծալ ի լոյս աքքայութեան։*
*Յամի Տն.* 1805 *ի օգոստոսի* 19

20. *Ննջէ յայս տապան,*
*Չիչիլեայ կուսան.*
*Բարեսէր վարուք,*
*Աղքատաց օճան։*
*Էր աղօթասէր,*
*Առ մայր ցաւագին.*
*Տենչայր տեսանել*
*Ըզփառըս Նորին։*
*Սուրբ վարկանէր,*
*Ըզկեանս աշխարհի.*
*Յարէր ի խնդիր*
*(Վ)երին գաւառի։*
*Փոխեցաւ յաստեաց*
*Ամս եօթանասնի*
*Հայցէ զօգնութիւն*
*Միոյ հայր մերի*
18...

21. *Տապան Արեելցի Հալէպի*
*Ջատէ պարոն Կարապետին*
*Վեհանձն խոհեմ ի գործ և ի բան.*
*Խոնարհ բարեմիտ բազմաց օգնական*
*Սիրելի բնաւից՝ գովեստից արժան*
*Յիրըս դըժուարին ճարտար քաջաջան։*
*Իբր ամաց յիսնից յախտ ջրգողութեան*
*Անկաւ յեղակարծ անբըժըշկական։*
*Որով փոխեցաւ ի կեանս անվախճան,*
*Կարօտեալ անա հայր մերի միայն։*
*Յամի Տն.* 1805 *նոյեմբեր* 9

*Հէլէպլու կամ Հալէպլի (հալէպցի) մեծահարուստ վաճառականներ ունեցած ենք որոնք* 18*րդ դարուն վերջերը խմբովին լատինացած են։ Արդէն ընդհանրապէս արաբախօս, և անուններն ալ օտարահնչիւն՝ շատ դիւրութեամբ ուծացան թէ՛ իրենց ազգէն և թէ իրենց պատկանած եկեղեցիէն։ Այս վաճառականներէն կը յիշուին խօճա Մուսա (Մովսէս), խօճա Պուտրոս, խօճա Ապտուլմէսի, խօճա Եուսուֆ եայլն եայլն։*

Գ. ՀՆԱՍԷՐ

---

1. *Երէց եղբայր պատմաբան Հ. Միքայէլ Չամչեանի, ծնած է Կ. Պոլսոյ մէջ* 1724 *մարտ* 24*ին։ Ասոր նախաձեռնութեամբն է որ Վենետիկի Միխիթարեանները առաջին հայերէն Օրացոյցը հրատարակեցին* 1757*ին և կանոնաւորապէս կը շարունակեն հրատարակել մինչև այսօր։*

## ՀԱՏԱՆՈՒԱԳ

*Գերեզմանին վըրայ բացուող ծաղիկներէն*
*Հիւսէ՛ պըսակն երազներուն և պատրանքին.*
*Եւ հոգիիդ լուռ միջոցին մէջ թող ձիւնեն*
*Տատրակներուն թըռիչքն և չոքը լուսնակին.*
*Ու քաղէ Յոյսը գաղտօրէն ու ժպտագին*
*Իբրև սաղարթ մը տրտմաւէտ նոճիներէն...։*

ԱՐՍԷՆ-ԵՐԿԱԹ

digitised by A.R.A.R.@